«Տոննաներով» անվճար մաթեմատիկական աշխատաթերթեր (հանձնարարություններ) ուսուցիչների համար

Ստորև բերված է վեբկայքերի հավաքածու, որտեղ դուք կարող եք գտնել մաթեմատիկական տպվող աշխատաթերթերի (հանձնարարությունների) լայն տեսականի, որոնք կարող եք օգտագործել ձեր դասարանում՝ մաթեմատիկայի ուսուցման ընթացքում: Այս կայքերից ոմանք առաջարկում են նաև մաթեմատիկայի ուսուցման այլ նյութեր, ներառյալ ինտերակտիվ խաղեր, հանելուկներ, գործողություններ, գործիքներ և շատ ավելին: Աշխատանքային թերթերի մեծ մասը, որոնք դուք կգտնեք այս կայքերում, PDF կամ HMT ֆայլերով են: Դուք կարող եք նախադիտել աշխատաթերթերը նախքան դրանք ներբեռնելը: Բացի այդ, այս կայքերից մի քանիսը, չնայած որ առաջարկում են անվճար աշխատաթերթեր, լրացուցիչ գրանցում են պահանջում՝ իրենց տրամադրած նյութերին լիարժեք հասանելիություն ունենալու համար: Մաթեմատիկայի աշխատաթերթերը հավաքված են բազմաթիվ կատեգորիաներում և կարող են որոնվել ըստ դասարանի կամ թեմայի:

Super Teacher Worksheets

Super Teacher Worksheets-ը տրամադրում է աշխատաթերթերի լայն տեսականի: Առաջարկվող աշխատաթերթերն ընդգրկում են մաթեմատիկայի տարբեր ոլորտներ, այդ թվում՝ հանրահաշիվ, երկրաչափություն, հավանականություն, գրաֆիկներ և շատ ավելին: Թեև աշխատաթերթերից և գործողություններից շատերն անվճար են, բայց բոլոր նյութերին անսահմանափակ մուտք ունենալ համար անհրաժեշտ է անդամակցություն Super Teacher Worksheets-ին: Բացի մաթեմատիկայի աշխատաթերթերից կայքը տրամադրում է նաև «կարդալն ըմբռնելու հմտություններ, ուղղագրության ցանկեր, ձեռագրի պրակտիկայի թերթիկներ, քերականական աշխատաթերթեր, տոնական տպագրություններ և շատ ավելին»:

Math Worksheets For Kids

Math Worksheets For Kids-ն առաջարկում է մաթեմատիկայի անվճար հանձնարարություններ սկսած մանկապարտեզի սաներից մինչև 6-րդ դասարանի աշակերտների համար: Դուք կարող եք թերթել աշխատաթերթերն ըստ դասարանների և թեմաների: Թեմաները ներառում են թվեր (օրինակ՝ հաշվում, թվերի համեմատում, արժեք, կլորացում, հռոմեական թվեր), սովորական և տասնորդական

կոտորակներ, չափումներ (օրինակ՝ փող, ժամանակ), 4 գործողություններ (գումարում, հանում, բազմապատկում, բաժանում և գործողությունների հերթականություն), երկրաչափություն, համամասնություններ, տոկոսներ, ամբողջ թվեր, տեքստային խնդիրներ և շատ ավելին: K5-ի անդամներն ունեն լրացուցիչ հնարավորություններ, ինչպիսիք են աշխատաթերթերը Google Classroom-ում ուղղակիորեն կիսելու, համապատասխան աշխատաթերթերի ամբողջական հավաքածուները ներբեռնելու և այլն:

Math Drills

Math Drills-ը պարունակում է հազարավոր անվճար մաթեմատիկական աշխատաթերթեր, որոնք կարող եք օգտագործել ձեր դասարանում: Աշխատանքային թերթիկներ որոնելու համար օգտագործեք կայքի որոնման գործառույթը կամ զննեք հրամանացանկի կատեգորիաները: Կան չափումների, երկրաչափության, հանրահաշվի, վիճակագրության և այլնի աշխատաթերթեր:

Homeschool Math

Homeschool Math-ը տրամադրում է կրթական մաթեմատիկական ռեսուրսների լայն տեսականի տնային ուսուցման, ծնողների և ուսուցիչների համար: Այս ռեսուրսները ներառում են անվճար մաթեմատիկայի աշխատաթերթեր, դասեր, առցանց մաթեմատիկական խաղեր, ուսումնական ծրագրերի ուղեցույցներ, մաթեմատիկական տեսանյութեր, ակնարկներ և շատ ավելին: Ազատ մաթեմատիկական աշխատաթերթեր բաժնում դուք կկարողանաք մուտք գործել տպագրվող մաթեմատիկական աշխատաթերթեր՝ 1-ից 7-րդ դասարանների համար: Այս աշխատաթերթերը հասանելի են ինչպես PDF, այնպես էլ htm ֆայլերի տեսքով: «Դրանք նաև շատ հարմար են. դուք կարող եք որոշել խնդիրների քանակը, փոփոխել տառատեսակի չափը, հեռավորությունը և այլն: Աշխատանքային թերթերը պատահականորեն են ստեղծվում, այնպես որ ամեն անգամ կազմվում են տարբեր հանձնարարություններ: Բոլոր աշխատաթերթերը ֆայլի 2-րդ էջում ունեն պատասխաններ»:

Dads Worksheets

Dads Worksheets-ն առաջարկում է հազարավոր մաթեմատիկական աշխատաթերթեր, որոնք նախատեսված են դասարանում օգտագործելու համար: Այն նաև առաջարկում է մաթեմատիկական խաղեր, հանելուկներ և մի քանի մաթեմատիկական գործիքներ

(օրինակ՝ տարբեր կիրառության հաշվիչներ, հետհաշվարկի ժամանակաչափ, հռոմեական թվերի փոխարկիչ և շատ ավելին): Մաթեմատիկայի աշխատաթերթերը դասավորված են հետևյալ կատեգորիաներով՝ հիմնական մաթեմատիկական աշխատաթերթեր (գումարում, հանում, բաժանում, բացասական թվեր և այլն), կոտորակային աշխատաթերթեր (կոտորակների կրճատում, համեմատություն, հանում, բաժանում, կոտորակային տասնորդական տոկոս և այլն), տեքստային խնդիրներ, այլ աշխատանքային թերթիկներ (չափումներ և փոխարկումներ, նախշեր և փազլներ) և այլն:

Նյութի աղբյուրը. Educatorstechnology